№ 176 Հոկտեմբերի 13 (25) 1879 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հոկտեմբերի 13 (25) № 176

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարւանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Յօդւածները [illegible] ուղղել
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն [illegible]

Յայտարարութիւնների համար վճարւում են [illegible] 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ չինականութեան մասին.—Ներքին տեսութիւն. [illegible]—Արտաքին տեսութիւն. [illegible]—Յայտարարութիւններ.—[illegible]

ԴԱՐՁԵԱԼ ՉԻՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մի երեւոյթ կայ մեր հայոց հասարակութեան մէջ, որ իր առանձնութեամբ ուշադրութեան արժանի է։ Դա հայի յատկութիւնն է իրան հեռու պահել օտար շրջաններից, երբէք չը պտտել, չը-լինել այլազգի շրջաններում։

Թիֆլիսի հայերից շատ քչերը յարաբերութիւն ունեն նոյն քաղաքում բնակւող ռուսների, փռանցիների, լեհացիների, գերմանացիների հետ, Թիֆլիսի հայ ընտանիքը ծանօթ է լինում միմիայն հայ ընտանիքների հետ։ Երբէք չէք տեսնի որ մի հայ ընտանիք ընդունէր իր տանը մի օտարազգի ընտանիքի անդամներին, կամ այցելութիւն գործէր այլազգի ընտանիքին, նրա հետ բարեկամական յարաբերութիւններ ունենար, մտերիմ ծանօթութեան կապեր հաստատէր այս կամ այն օտարազգի ընտանիքի հետ։

Այդ երեւոյթը մենք երկու կողմից էլ վնասակար ենք համարում. Նախ հայը և հայոց ընտանիքը զրկւում են օտար, շատ անգամ հայոց շրջանից մտաւորապէս աւելի բարձր, աւելի զարգացած շրջանի հետ ծանօթութիւնից, որին օգուտ չեն քաղում աւելի զարգացած և առաջադէմ շրջանի իրանց վրայ ունենալու կրթիչ ազդեցութեան միջոցից, իսկ երկրորդ՝ մեր հայերը զրկւում մեծ վնաս են հասցնում և իրանց ազգութեան անուանը, չը ծանօթացնելով օտարներին իրանց ազգի կեանքի հետ։

Պտտեցէք Թիֆլիսի օտարազգի բոլոր ընտանիքներում, և այդ ընտանիքների թւում, որոնք առաւել քան տարիներով բնակւում են Թիֆլիսում, հայերին այդքան ժամանակ հարեւանութիւն ունե-լով(?) գուցէ ոչ մենք չէք գտնի, որ հասկացողութիւն ունենար թէ ինչ է հայոց ազգը, ինչ է Հայաստանը, ինչ է հայոց հին պատմութիւնը, ինչ է հայոց հին և նոր լեզուն ու գրականութիւնը և այլն....

Դորա մէջ ո՛վ է մեղաւոր, եթէ ոչ նոյն ինքն հայը, որ խորշում է օտար շրջաններից, երբէք չէ աշխատում ծանօթացնել օտարներին իր ազգի անցեալ պատմական կեանքի հետ, չէ աշխատում հասկացնել օտարազգիներին, որ իր մայրենի լեզուն բաւականին և յանկարծ լեզուի պէս կարող(?) [illegible] կոյն(?) լեզու կարող է համարել, չէ աշխատում փարատել օտարների հայի վրայ ունեցած կարծիքը իբր թէ բոլոր հայերը վաճառականներ կամ մանրավաճառներ են և իբր թէ ուրիշ ոչինչ պարապմունքներ, արհեստներ, կամ գիտնական աշխատանքներ ընդունակ չեն, և այլն....

Հայը փակւելով իր նեղ առանձնական ընտանեկան փակ շրջանի մէջ, շրջապատւելով մի անձուկ չինական պատով, միշտ արհամարհել է իրան և իր ազգը օտարներին ծանօթացնելու միջոցը, փախչելով օտարների հետ մտերիմ յարաբերութիւններ, սերտ հասարակական ծանօթութիւն ունենալուց։

Այս այդ չինականութիւնը մեծ վնաս է տալիս հայի անուանը, միջոց տալով օտարներին թիւր հասկացողութիւն կազմելու հայի և հայութեան մասին....

Այս շնորհիւ, մի ռուս, կամ մի գերմանացի, որ բնակւում է Թիֆլիսում, գիտէր բան և հինգ, եւ բնակւում(?) տասն(?) տարի շարունակ, հայերի մասին իր համոզմունքը կազմում է միմիայն Խաւնաբարի(?) բարձրատեղի(?) վաճառականների իր հետ փարթամներին համեմատ, նա Թիֆլիսում իր ամբողջ կեցութեան ժամանակ, բացի այդ վաճառականներից, ոչ մի հայի հետ ծանօթ չէ եղել, ոչ մի հայ ընտանիք չէ մտել, որովհետև հայերը փախչում, խորշում են օտարներից, նա իր կեանքում չէ խօսել հայ ինտելիգենցիային պատկանող ոչ մի անձի հետ, որ իր ազգի մասին, իր մայրենի գրականութեան մասին, հայի հին թէ նոր մտաւոր կեանքի մասին մի քիչ տեղեկութիւններ տալով, փարատէր օտարազգու ուղեղից հայութեան մասին կազմւած նրա սխալ կարծիքը և համոզմունքը։

Այս աչքի ընկնող մեր փակւածութեամբ մենք ինքներս մեզ վնասում ենք, վնասում ենք մեր ազգի անունը և հայութեան մտաւոր, բարոյական առաջադիմութեանը, վնասում ենք հայութեան գործին, թողնելով օտարազգիներին իրանց մէջ արմատացած, թէև սխալ կերպով կազմւած գաղափարի գրգռումները(?) դէպի մեր ազգը....

Իսկ եթէ կան հայերից մի քանի անհատներ, որոնք պտտում են օտարների շրջանում, դրանք իրանք էլ լինում են, մեծ մասամբ, հայութեան ուրացող(?) [illegible] մարդիկ, որոնք իրանց օտարացած լինելով և ծանօթ չը լինելով իրանց ազգի անցեալ պատմութեան, ազգի ներկայ կեանքի ու մայրենի լեզուի հետ, պարզ է որ չեն էլ կարող այդ բարքի հետ ծանօթացնել օտարներին։

Չինականութիւնը այնքան խոր արմատներ է գցել մեր մէջ, որ մեր ինտելիգենցիան, անգամ, այդ չինական պարսպով(?) [illegible], փախչում է օտար շրջաններից և արհամարհում է մի հաստատ միջոց օտարների համոզմունքից հայի մասին կազմւած սխալ և վնասակար կարծիքը փարատելու, չէ աշխատում նրանց հետ մտերիմ հասարակական յարաբերութիւններ և ծանօթութիւն պահպանելու։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

4 Նոյեմբերի

[illegible]

[illegible] (1868 թ.) [illegible]

[illegible]

[illegible] 10—15 [illegible]

[illegible] 10 [illegible] 1880 [illegible]

Յ. Հ.

ՆԱՄԱԿ [illegible]

29 Հոկտեմբերի

[illegible]